Ը. ՏԱՐԻ ՇԱԲԱԹ 30 ՅՈՒԼԻՍ 1905 ԹԻՒ 735

ՇԱՐԺՈՒՄ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար
տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 7 »
Արտասահմանի
համար տարեկան 15 »
վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար
տարեկան 3 տլ.
վեցամսեայ 1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեքեն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ:

—o—

Վառնայի համար ձեռքէ 10 սանթիմ է

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեան

...я на вѣстникъ „...аржумъ" Варна

Redaction du journal „Charjoum" Varna (Bulgarie)

—o—

Պուլկարիոյ համար ձեռքէ 15 ՍԱՆԹԻՄ
Արտասահմանի համար ձեռքէ 20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք ետ չեն տրուիր

R. P. Kalémcarian Mechitharistengasse W. 4. Vienne (Autriche)

ВАРНА 30 VII

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺԱՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԱՍԽԱՆ

Բալկանեան երկիրներից, Ամերիկայից, Եգիպտոսից և ուրիշ տեղերից զանազան ընկերներ իրենց համակրութիւնը յայտնելով իմ բռնած ներկայ դիրքիս համար, խնդրում են նաև որ ես նամակներով թելադրեմ, հրահանգներ տամ թէ իրենք ինչ դիրք պէտք է բռնեն որ հնարաւոր լինի իմ մատնանշած թերութիւնները վերացնել կազմակերպութեան միջից։

Անկեղծ ուրախութիւնս յայտնելով այդ ընկերներին իրենց մարդամեքենաներ չը լինելու և շնորհակալութիւնս դէպի ինձ արտայայտուած համակրութեան համար, յայտարարում եմ։

Որ նամակներով ես ոչ մի թելադրութիւն չեմ կարող տալ։ Իմ հրապարակով գրածները կարծում եմ արդէն բաւ են համոզել որ կազմակերպութիւնը վէրքոտ է, պէտք է բուժել այդ վէրքերը. ու այդ բուժումի յաջողութիւնը կախուած է գալիք Ընդհանուր Ժողովի կազմից։ Ամէն տեղի ընկերներ պարտաւոր են անկախ, անվախ, ոչ մի ազդեցութեան տակ չընկնող պատգամաւորներ ընտրել Ընդհանուր Ժողովի համար, մանաւանդ խուսափել ընտրելու այնպիսի մարդկանց, որոնք այսինչ կամ այնինչ շահով կապուած են Դաշնակցական Բարձրագոյն մարմինների հետ, ու գտնւում են ծառայական կամ հովանաւորեալ դիրքում։

Լսում եմ որ եղել են մարդիկ, որոնք ասել են թէ Ընդհանուր ժողովը նիւթապէս սուղի է նըստում։ Դրանք առարկութիւններ են, որոնք ստեղծւում են միամիտներին խաբելու համար։ Դաշնակցութեան օրէնքով երկու տարին մէկ անգամ պէտք է Ընդհանուր ժողով լինի։ Այդ որոշումը տուած միջոցին մեր ընդհանուր ժողովները գիտեցել են թէ ծախսը ո՞րչափ է լինում.....

Այժմ արդէն նշանակուած ժամանակամիջոցին լրանալու համար վեց ամիս է մնում. պէտք է պահանջել որ գալիք յունուարից հրաւէրները ցրուեն։

Մենք ժամանակին կը խօսինք թէ ի՞նչ հարցեր պէտք է դնել Ընդհանուր Ժողովի առաջ։

Այժմ մի բան միայն կասենք.

Այժմվանից բոլոր ընկերները պէտք է որոշեն իրենց պատգամաւորների վրայ պարտականութիւն դնել, Ա. Ընդհանուր Ժողովի կայացած պարագային—նախ իրական պատգամաւորները ժողով գումարեն. Բ. ստուգեն բոլոր պատգամաւորների վկայագիրները՝ ստուգեն թէ իրօք այն մարմինները գոյութիւն ունին, որոց կողմ՞ից պատգամաւորներ կան եկած. ստուգեն թէ այսինչ կամ այնինչ գործիչը ինչի չէ հրաւիրուած. ինչի մէկը մոռացուած է միւսին նախապատուութիւն տրըւած։ Իրական պատգամաւորների ժողովը լինելով Դաշնակցութեան գերիշխող մարմինը կարող է հէնց այդ ժողովում բիւրոներին ձայնից զրկել՝ նա այդ իրաւունքը ունի. բիւրոները տեղեկատու մարմիններ են—ուրիշ ոչի՛նչ։ Նրանք միայն հաշիւ պէտք է ներկայացնեն բայց ո՛չ քուէ տան։ Նրանց շրջանում գտնուող կեդրոնական կոմիտէները արդէն շրջանի ձայները ներկայացնում են։

Մինչեւ օրս բիւրոները օգտուել են ձայներով, որովհետեւ միշտ ձգտել են ամեն ինչ, ապակեդրոնացման քօղի տակ, խոնարհեցնել և իրենց ձեռքում կեդրոնացնել։ Ժամանակ է նրանց զրկել այդ չահագործական իրաւունքներից։

Պէտք է լաւ ըմբռնել որ Ընդհանուր ժողովի գոյութեան միջոցին, այլեւս Դաշնակցական ոչ մի մարմին իբրպէս գոյութիւն չունի. Դաշնակցութեան տէրը, հրամայողը Ընդհանուր ժողովն է և նա կարող է վայրկենապէս ջնջել և նախորդ ընդհանուր ժողովների այն որոշումները ձայների վերաքննմամբ, որոնք կազմակերպութիւնը այս օրին են հասցրել։

ՎԱՐԴՕ

ՆԱՄԱԿ ԵՐԿՐԷՆ

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Այսօր իրողութիւններն կը ցուցնեն թէ մենք բոլորովին խաբուած ենք. արտասահմանի հայութիւնը կը ներկայացունէ, այն խաւնակ լաբիւրընդոսը ուսկից չէ կարելի գրական օգուտ մը, կամ ակնկալութիւն մը ապահովել ի նպաստ Մայր Հայրենիքին . . . .

Ու այս բոլորէ վերջ իւրովի կը հարցունեմ, ի՞նչ պիտի ըլլայ ճնշուած, բռնաբարուած, Հայաստանի վիճակը, ո՞վ պիտի կարեկցի, ձեռք մեկնէ տանջանքի երկրին մէջ ապրող անթիւ ու անհամար թափառական ու հալածուող բռնութեան զոհերուն։ Եթէ ոչ սուր մը, գէթ պատառ մը հաց, պուտ մը ջուր ո՞վ պիտ տայ։

Անգութ հարազատնե՛ր, ըսէք ըսէք, պիտ գլանաք կտոր մը չոր հաց տալու այն այրիներուն, որոնք կամաւ ինքզինքնին կապած են Մայր Հայաստանի փէշերուն, ու մինչեւ այս վայրկեանիս անոնք կը յուսա՞ն թէ դուք պիտ հանիք ու խնամէք զիրենք. «դուք ալ մարդ էք» անճապարեցէ՛ք ու մի՛ դաւաճանէք ձեր արիւնակիցները, որոնք կապրին յոյսո՜վ մը միայն։

Գաւառներէն օրական հարիւրաւոր նամակներ կը տեղան Պատրիարքարան, որոնք բոլորն ալ իրենց իսկական խեղճութիւնը ու թշուառութիւնն կը յայտնեն. ու Օրմանեան էֆէնտիին ուշադրութիւնն կը հրաւիրեն. բայց Օրմանեանին ճարպոտ գանկին մէջ զգացում ըսուածը բոլորովին անհետացեր է։ Օրը անգամ մը, փորը տնկած Ըլտըզ կը վազէ, Համիտին ոտքերը լզելու և շնորհ խնդրելու այս կամ այն Թուրք պաշտօնեային համար. Օրմանեանը այդ տեսա՛կ գործերը կարգադրելու համար լաւ աճէնթ մըն է Թուրք պաշտօնեաներու. և միւս կողմէն կը թելադրէ հայ վաճառականին ու հարուստին, որ Թուրք բանակին կարգադրութեան, օգնութեան գործին պէտք եղած նիւթականը տան. իսկ Հայաստանէն եկած աղերսները ու խնդրանքները պարունակող նամակները մինտէր ալթը ընելով վրան կը նստի ու կըսպասէ Թուրք պաշտօնեաներուն խլկելիք պաղչիշներուն և ուռվէթներուն. ահա մեր պատրիարքը։

Իսկ Հայաստանի մէջ երբ մեր եկեղեցիներն ու վանքերը Թրքական ախոռներ և զօրանոցներ կը դառնան, անդին Փարիզի մէջ, ազգայինճի հայ ամիրա մը ազգային բարերար տիտղոսը իր ճակտին փակցունելու համար հազարաւոր ֆրանքներ կը ծախսէ փութով եկեղեցի մը շինելու, ինչպէս նաեւ առեւտրական վարժարան մը հիմնելու սոյն անձին կողմէ. և երկրագործական վարժարան մը հաստատելու Եգիպտահայ փաշայի մը կողմէ Նեղոսի ափին վրայ, կերեւի թէ մեր հարուստ երեխաները նպատակ դրած են արաբներուն վաճառականութիւն և երկրագործութիւն սորվեցնելու. երբ ճիշդ ներկայիս հայ պատանին իր մայրենի լեզուն կորսնցնելու վիճակին մէջ է։

Ինչ սքանչելի նմանութիւն, կարծես թէ բոլորն ալ միեւնոյն կաղապարով ձուլուած են և միեւնոյն անմիտ տրամաբանութեամբ վարակուած. ո՜վ յաւիտենական տգիտութիւն։

Մնամ խորին յարգանօք
ՍԴԱԻՈՐ

—❀❀—

ՌՈՒՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

—○○—

Այն ինչ որ է. ինչ որ կուզէ
Եւ ինչ որ պիտի ըլլայ.

(Շար. Նախ. թիւին)

Ի՞նչ պէտք է հասկնան անոնք սա խօսքերէն.— Կառավարութիւնը իրենց դէմ լարուած է։ Երկու բան։ Մէկը՝ բաւական տարօրինակ, բայց եւ այնպէս իրական.— կառավարութիւնը, միահեծանի, շահու եւ կաշառքի եզական սիստէմով մը՝ վարկաբեկած է իրենց Ռուսաստանը։ Կաշառքը, իրապէս, պատահական դէպք մը չէ ռուսներուն մէջ. ատի ազգային, կամ աւելի, կայսերական կարգ ու կանոն մ'է։

Ամբողջ վարչութիւնը այս սկզբունքին վրայ է հիմնուած.— ԿԱՇԱՌ։ Չեն վճարեր պաշտօնեաներուն՝ որովհետեւ գիտեն թէ կաշառք ունին տնոնք. այսպէս, ոստիկանութիւնը կը վարձատրուի շատ ամօթալի կերպով մը, որովհետեւ կաշառք ունի։ Զինուորները, վարչական աստիճանի վերէն մինչեւ վարը՝ կաշառքը կը գործածեն իբրեւ պարտաւորիչ, օրինաւոր բան մը։ Օրինակ.— կառավարութիւնը Արժանդինայի եւ Չիլիի շարք մը խոշոր նաւերու գրնման որոշում տուած էր։ Ամեն ինչ վերջանալու վրայ, վճարումը հասնելով 75 միլիոն ռուպլիի. ռուս պաշտօնեաները տէրօէն դուրս հանեցին պանքի մը մէջ վճարելի իրենց մէկ մէկուն անունով, աւելի քան 10 միլիոն ռուպլի։ Խնդիրը լուռ անցաւ։ Աէա կաշառքը եւ անա գողութիւնը։ Զինուորները կը գողնան։ Ժամանակ առ ժամանակ, ժէնէրալ մը, (հոս ամեն մարդ ժէնէրալ է) կը վռնտուի՝ իր աստիճանէն վեր գողցած ըլլալուն համար. Օրինակ վարչական գողութիւններէն—հրէշաւոր գողութիւնները կարմիր Խաչի կորուստներէն—միլիոններ գողցուած են այս կերպով Մանչուրիայի վիրաւորուածներէն՝ այնպիսի ձեւով մը, որ այլ եւս անկարելի է յօժարակամ կօպէկ մը գտնել պատերազմի զոհերուն օգնելու համար։ Ապա, ամեն ինչ դրամական հարցի մ'է յանգած։

Երկրորդ բանը՝ որ պէտք է հասկցուի սա բառերէն.— Կառավարութիւնը ուղղուած է կարգապահ մարդոց դէմ, խիստ որոշ է, խիստ կարեւոր, որովհետեւ այդ օրինապահ մարդիկը, իրապէս, վնաս կրած են ուղղակի կերպով թէ իրենց անձին եւ թէ իրենց սեպհականութեան։ Կառավարութիւնը՝ վերէն խառնակութիւնները փրկելու համար, ԿՈՉ ԸՐԱՎ Է ՎԱՐԷՆ ԽԱՌՆԱԿՈՒԹԵՒՆՆԵՐ։ Կառավարութիւնն էր, այսինքն Բէլէվի քաղաքականութիւնը ծնունդ առած Լօրիս Մելիքովէն՝ Ալէքսանտր Բ.ի ներքեւ, որ կազմեց, առաջ բերաւ ռուս գիւղական ըմբոստութիւնները եւ որ մղեց զանոնք, յանուն կայսեր՝ ընդդէմ ազատականներուն։ Սակայն խառնակութիւնը չը պատճառաբաներ. իրարանցումը խտրութիւն չը ներ. ցարին ժողովուրդը արշաւած է՝ միեւնոյն ատեն այրելով, կողոպտելով, մորթոտելով, ընդդէմ ազատականներուն, ընդդէմ վաճառականներուն,—որ դեռ հեռու էին ազատամիտներ կոչուելէ եւ որ եղան անմիջապէս,—ընդդէմ ազնուականներուն.—մեծ հողային կալուածատէրեր, որոնք երբէք եղած պիտի չըլլային (ազատական), եւ որոնք հիմա արմատականներ են։

Ո՛չ, յեղափոխութիւնը չը պիտի գայ թշուառութեան եւ նախճիրի քաղաքներէն—Բոլոնիայէն—մշտնջենապէս ցաւատանջ,—կամ կարմիր Կովկասէն. այն պիտի գայ կայսրութեան փարթամ սրտէն. հզօր, հարուստ, խաղաղ պատմական քաղաքէն, հզօր անցեալով, հզօր ապագայով.—այն պիտի գայ Մոսքովայէն։

Հոն է այն։

Քանի Յեղափոխութիւնը, Մոսկովայում, աւելի եւ աւելի կը կազմակերպուի, եւ քանի կառավարութիւնը հեազհետէ կը կազմալուծուի Բեթերսպուրկի մէջ, պիտի գայ բոպէ մը, երբ Մոսկովան Բեթերսպուրկի տեղը պիտի գրաւէ։

Դա կը նախատեսուի 6 ամսուայ ժամանակամիջոցի մը մէջ, եթէ Բեթերսպուրկ չը վճռէ համաքայլ ընթանալ Մոսկովայի հետ. ուստի չը պիտի վճռէ։

Անձնական տպաւորութիւն մը. իբրեւ արդիւնք կարգապահ մարդոց հետ ունեցած երկար տեսակցութեանցս.— Ռուսական Յեղափոխութիւնը աշխարհը պիտի զարմացնէ իր արագութիւնով։ Արագութիւնը մի խառնաշփոթէք մօտալուտութեան հետ։ Ըսել կուզեմ թէ՝ կարելի է որ Յեղափոխութիւնը քանի մը ամիս ետ սպասէ. բայց ինչ քանէ ալ ծագում առած՝ մինչեւ վերջին ծայրը պիտի երթայ մէկ անգամէն։

Խաղաղութեան կայացումը կրնա՞յ ուշացնել կամ ոչնչացնել Յեղափոխութիւնը։

Խաղաղութեան կայացումը ուրիշ բան չը կրնար ընել՝ բայց եթէ փութացնել Յեղափոխութիւնը. որովհետեւ Բեթերսպուրկը կարգ մը բաներու մէջ չը համակերպիր Մոսկովայի՝ պատերազմի առթիւ կառավարութեան համար ստեղծուած դրութեան պատճառով։ Կայանալով խաղաղութիւնը, Բեթերսպուրկ ամեն ինչ պիտի մերժէ Մոսկովային։ Արդէն, այդ նոյն նախատեսութիւնով, սպասցուց զայն Պուլիկինի Սահմանադրութեան. որ իրապէս ոչինչ է։

Մոսկովան ի՞նչպէս պիտի յաղթէ Բեթերսպուրկին։ Առանց կռուելու. զայն չը ճանչնալով։ Մոսկովայի յեղ. կազմակերպութիւնը պիտի վճռէ, պիտի շարժի այնպէս, որպէս թէ Բեթերսպուրկը գոյութիւն չունի։

Բայց Բեթերսպուրկի բանա՞կը։ Ո՞ը։ Այն որ Մանչուրիա՞ է։ Դեռ երկար ատեն Բեթերսպուրկ ետ չը պիտի կանչէ զայն։ Այդ բանակը Բեթերսպուրկեան պիւրօքրասիին համար պատիժներ պիտի հնարէ։

Բօզաքնե՞ը։ Ի՞նչ կրնան ընել քօզաքները փողոցներուն մէջ կազմակերպութեան մը, որ ամեն տեղէ, եւ որ տեղ մ'ալ չը տեսնուիր, հակառակինքզինքը չը ծածկելուն։

Ի՞նչ է Մոսկովայի Յեղ. կազմակերպութիւնը։

Շատ հասարակ է եւ շատ ալ հսկայ, կը բաղկանայ երկու պիւրօներէ (դիւան) կամ զէմստվօներու եւ քաղաքապետութիւններու (տում) քսիթէներէ, ուր կը գտնուին անոնք մշտապէս։ Այս պիւրօները ճշմարտապէս երկու ժամանակաւոր կառավարութիւններ են, քանի որ տումաներու եւ զէմստվօներու պատգամաւորները կը հնազանդին իրեն ամեն բանի մէջ եւ ամեն բանի համար։ Պիւրօներու մէկ նշանին վրայ՝ որ զիրենք կը կանչէ, տումաներու եւ զէմստվօներու պատգամաւորները Մոսկովա կը փութան. Այդ պատգամաւորները քաղաքներու եւ շրջականներու է՛ն երեւելի անձնաւորութիւններն են։ Մոսկովան երբէք չը հետաքրքրուիր գիտնալ թէ՝ Բեթերսպուրկը պիտի արգիլէ ժողովը։ Ոչինչ, բացարձակապէս ոչինչ հնար է որ պիւրօներու որոշած ժողովը տեղի չունենայ։ Նախ՝ քան առանձին բնակարաններ. եւ, ընդունելով թէ առանձին բնակարաններու մէջ ժողով կազմելը անհնար դառնայ, պատգամաւորները կանցնին սահմանագլուխ եւ կը հաւաքուին պիւրօին որոշած վայրը։ Երբ պատգամաւորները հաւաքուած են, պիւրօները կը վերածուին համաժողովի պիւրօներու, եւ պիւրօներու նախագահը համաժողովի նախագահն է։

Բեթերսպուրկի եւ Մոսկվայի միջեւ տեղի ունեցած անհամաձայնութեան միջոցին ի՞նչ պիտի որոշէ եւ ի՞նչ զէնք պիտի գործածէ Մոսկովան։

Բոլոր ընտրողները կը հնազանդին ընտրեալին, ինչպէս որ ընտրեալն ալ կը հնազանդի համաժողովի որոշումներուն։ Պիւրօն, համաժողովի քուէէն վերջ, պիտի որոշէ ո՛ր թուականէն անդին չը վճարել տուրքեր եւ ո՛ր թուականէն սկսեալ մերժել ամեն օժանդակութիւն Բեթերսպուրկի կառավարութեան։ Ո՛չ կօպէկ մը եւ ո՛չ ալ զինուոր մը։ Դա կազմակերպուած թօլսթօյականութիւն մ'է. Դա աւետարանական Յեղափոխութիւն մ'է։

Ժամանակաւոր կառավարութիւնը, այսինքն Մոսկովայի պիւրօները, հա-

Ա. ԱՄՖԻՏԵԱՏՐՈՎ

—⁘—

ՎԻԿՏՕՐԻԱ ՊԱՎԼՕՎՆԱ

—⁘—

(Տօնախմբութիւն)

—)o(—

(Գրագէտի յիշողութիւններից։ Ամրան արկածներ բաւական տարօրինակ հասարակութեան մէջ)

—)o(—

(Թարգմ. ռուսերէնից)

51

Ժ.

(Շար. Նախորդ թիւին)

Տնից ծանօթ ձայներ լսվեցին, Վանիչկան եւ Արինան դուրս եկան տերասսի վրա եւ ինչ որ խնդրի մասին վիճում էին, ձեռքերնին շարժելով։ Վանիչկան արեւից նեղվելով գլուխը թաշկինակով ծածկում էր. մօր-Արինայի հետ ունեցած խիստ նը մանութիւնը այս անքամ չնորհիւ թաշկինակի աւելի աչքի զարնելով ինձ շատ զարմացրեց։

—Զարմանալի կերպով մօրն է նըմանում. մատնանշելով Վանիչկային ասի ես։

—Այո, ասեց Վիկտորիան, եթէ չրջազգեստ հագցնես, ոչ ոք կարող է տարբերել։ Մենք ձմեռը, բարիկենդաններին դիմակաւորվեցինք... շատ ծիծաղելի էր, երկու կենդանի Արինաներ էին։

Վիկտորիայի աչքերում կրկին փայլեց այն խորամանկ ծաղրը, որ երկու անգամ արդէն ինձ շփոթեցրին, մէկ Արինայի, մէկ էլ իրեն մօտ։

—Այ քեզ...

Տարօրինակ միտք, ենթադրութիւն անցաւ մտքովս։

Մենք կրկին մօտեցանք մայրիի ծառին. Վիկտորիան գլուխը բարձրացրեց դէպի թռչունների բոյնը եւ ասեց.

—Ցիշում էք, Բուրունն էլ փորձեց բարձրանալ ծառը, թռչնի բուները վար առնելու համար... բայց չը կարողացաւ։

—Բայց ճիշդ որ շատ բարձր է։

Վիկտորիան գլուխը շարժելով ասեց.

—Բայց Վանիչկան կարողացաւ։

—Ամենքն էլ կօլումբ չեն կարող լինել։ յիշեցրի ես իր այդ օրվան կատակը.

Վիկտորիան պատասխանեց ինձ մի սուր եւ տարօրինակ նայուածքով.

—Ինարկէ... բայց եթէ այդպէս դատենք, Ամերիկան չը պէտք է գտնըվէր։

Վերջը Վիկտորիան կարծես մի ծանր բեռ ուսերի վրայից նետելով-ամբողջ մարմնով ձգվեց, բարձր ուղիղ առջեւս կանգնեց, կարծես իր ամբողջ մարմնով ճակատագրական կռիւ էր յայտարարում մէկին։

Բուրունի նամակը կրկին նրա ձեռքում երեւաց եւ նա արհամարանքով մատները զարկեց թղթին ասելով.

—Եւ այս տեսակ մի պարոն իրաւունք է համարում լինել կնոջ տէր եւ հրամայել. եւ վիրաւորվում է թէ ինչի կինը չէ խոնարհվում նրա ոտքի տակ։

Եւ խորամանկ նայուածք նետելով ինձ վերջացրեց։

—Եւ մի քանիսներն էլ ինձ խորհուրդ էին տալիս...

—Բայց ներեցէք, այդ չափազանցութիւն է նկատեցի ես, ոչ առանց թեթեւ նեղութեան. ես երբէք խորհուրդ չեմ տուել։

—Եթէ գնալ ես ուզում, ձին պատրաստ է գոչեց Արինան։

—Պատրաստ է, պատրաստ է. երգելով, թռչկոտելով սեզ դիմաւորեց Վանչիկան.

—Այ կօմիք, ակամայ ծիծաղելով նկատեցի ես։

—Ճիշդ չէ, կարծես իմ խօսքերից ուրախացած, հրաշալի տղայ է, անխորտակելի կենսունակութիւն։

—Կառքը պատրաստ է, յայտարարեց Վանիչկան։

—Շատ լաւ գնանք, ցը տեսութիւն Ալէքսանդր Վալէնտինիչ.

Ցը տեսութիւն։

Վիկտորիան յենվեց Վանիչկայի թեւին. մի քանի քայլ հեռանալով նա ետ նայեց եւ ասաց.

—Դուք ինձ ոչինչ չէ՞ք հարցնում:

—Ոչ, պատասխանեցի ես զարմացած։

—Նամակից յետոյ անգամ,

—Այ, գիտէք ինչ կայ, Վիկտորիա Պավլովնա բայց ոչ իրաւունք չունեմ:

Նա դանդաղօրէն բռնեց Վանիչ-

մաժողովի քուէէն վերջ՝ պիտի իմացտան աշխարհին՝ թէ ո՛ր թուականէն ասդին ժամանակաւոր կառավարութիւնը պիտի վճռէ. երբ ինք որոշ կառավարութիւն դառնայ.չը պիտի ճանչնայ նախորդ կառավարութեանը բրած ֆինանսական յանձնառութիւնները։

Հոս գաղտնիք մը չեմ երեւան հաներ երբէք։ Բեթերսպուրգ գիտէ այս բոլորը։ Լոկ յեղափոխութեան ուրուանկարը կը դնեմ հոս։ Մոսկովայի պիւռոները գաղտնի չեն գործեր։ Մոսկովայի պիւռոներուն դէմ բան մը չեն կարող ընել. միմիայն պիւրոյին անդամները կրնան տեղափոխել, բան մը, որ բոլորովին զուրկ է նշանակութենէ. սակայն պիւռոները, ինքնին, կը մնան, որովհետեւ ուրիշ անդամներ բացականերու տեղը կը գրաւեն։ Որպէսզի անդամներ չըլլան պիւռոներուն մէջ. հարկ է բովանդակ Ռուսաստանը պարպել։ Բան մը կարելի չէ ընել ազգի մը, որ մեծ կարգապահութիւնով, իր Յեղափոխութիւնը կը յառաջացնէ լոյս օրով։ Բան մը միայն կրնան ընել.— միանալ անոր։ Պատգամաւորները, հակառակ Բեթերովի տեսակցութեան յուսախաբութիւններուն, չն յուսահատած երբէք, որչափ որ կայսրը կը հասկնայ։

———

Պուլիկինի Սահմանադրութեան հրատարակումէն վերջ ի՞նչ պիտի տեղի ունենայ։

Տեղի պիտի ունենայ Յեղափոխութեան առաջին արարքը։ Այդ օր զէմսդվոներու եւ տումաներու համաժողովը կամ պիտի ընդունի զայն ի գործ դնել եւ կամ մերժել։

Համաժողովի վերջին գումարման մէջ, քանի որ բոլոր պատգամաւորները համաձայն էին Պուլիկինի Սահմանադրութեան չուզուելուն, վէճ մը ծագեցաւ ատոր Ընդունման եղանակի մասին։ Պատգամաւորներէն մեծ մաս մը ընդունեցաւ թէ՝ հարկաւոր է անմիջապէս դիմադրել ատոր եւ ատոր կուսակից դառնալ ուզողներու դէմ։ Շատ ուրիշներ յայտնեցին այն կարծիքը թէ՝ թերեւս քաղաքականութիւն ըլլար չը թողուլ բացառապէս կառավարական ներկայացուցչութիւն մը ստեղծուիլ, թէ կառավարութիւնը ներկայանար իբրեւ ազգային, ներկայացուցչութեան հետ՝ իսկապէս յեղափոխական, զէմսդվոներու եւ տումաներու պատգամաւորները։ Ինչո՞ւ չընդունիլ այս առաջին քայլը դէպի ազատութեան իդէալը։ Ինչո՞ւ չը տիրանալ ատոր, Պուլիկինի ընտրական ցանկին մէջ մտնելով զայն գրաւելով։ Անդամ մը բարձրանալով այդ աստիճանին, առանց այլեւս Սահմանադրութիւնով զբաղելու, ուզածնին պիտի կրնային պոռալ թէ՝ ժողովրդին եւ թէ՝ ցարին։

Որուն, առաջինները պատասխանեցին թէ՝ Պուլիկինի Սահմանադրութիւնը բաւական վտանգաւոր էր եւ կարելի էր, իրենք զայն խաբել փորձելով՝ անոր վոհերը դառնային։ Ճշմարիտ քաղաքականութի՞ւն էր ընդունիլ Սահմանադրութիւնը, որ լոկ Յեղափոխութիւնը կասեցնելու համար կազմուած էր։

Որուն երկրորդները պատասխանեցին թէ այլեւս բան մը չէ կարող կանգնեցնել յեղափոխութիւնը։ Ապա բոլոր հարց դրին թէ՝ եթէ ազատութեան ծայրայեղ աստիճանին երթալով եւ տալով ժողովրդին ընդհանուր քուէարկութիւն՝ կարողանային կասեցնել յեղափոխութիւնը, ի՞նչպէս այն գաղափար թէ Պուլիկինի սահմանադրութիւնը կրնար ապագային պատնէշ մը ըլլալ եւ է կերպով։ «Պիտի ընդունինք կայն եւ գոյութիւն չը պիտի ունենայ այլեւս.»

Ո եւ է վճռական որոշում չէ տրուած այդ կէտին նկատմամբ, բայց պիտի տրուի եւ միահամուռ։

———

Վասնզի ատի յեղափոխութեան հսկայական ուժն է։ Միահամուռ է այդ։ Ամէն ոք կուզէ այդ։ Գիւղացին ալ այդ կը պահանջէ։ Գիւղերու պատգամաւորներն ալ հեռու չեն քօլէգիվիզմէն եւ արդէն գիւղական հաւաքական հողերու բաժանումով են զբաղուած։ Ցուզած են կարծեօք այնպիսի սլատէմի մը, որ պիտի յանգի այն հարկին, ուր մեծ հողային կալուածատէրը պիտի վճարէ իր տուրքը հողով. այսպէս տակաւ առ տակաւ, պիտի հասնին օրինաւոր բաժանման։

Այո, ամէն մարդ կուզէ այդ. նոյն իսկ չինովնիկը, որ կը թողու կայսրը անփոյթ կերպով. եւ միեւնոյն ժամանակ պէտք է հասկնալ որ յեղափոխութիւնը իր մահն է, քանի որ կայսրը պիտի մնայ կայսր որքան ատեն որ կուզէ, այսինքն եթէ կուզէ ընել այն՝ ինչ որ հարկաւոր է ատոր համար։

Միաձայն է յեղափոխութիւնը իր ամենափոքր ցոյցերուն մէջ իսկ։ Արդէն թուած եմ այն կուսակցութիւնները, որ յեղափոխութեան դաղափարին կը ծառայեն. բազմաթիւ են, բայց եւ այնպէս երբ կը հաւաքուին համաժողովի մը մէջ, վիճաբանութենէ վերջ, իւրաքանչիւր իր ծրագրէն մաս մը կը թողու Միակ երեւնալու համար՝ ժողովրդին ու կայսրին։ Բոլոր որոշումները միաձայն քուէարկուած են։

Օրինակ.—ահա թէ ինչ պատահեցաւ ընդհանուր քուէարկումի պահուն. կինն ալ միասին հասկնալով։ Մի քանիներ կիներուն ալ քուէ տալու միտքը յուզեցին. գրեթէ բոլոր պատգամաւորները հակակարծիք էին. յանկարծ Սէրբին, Մոսկուայի թաղային խորհրդատու եւ անդամ տումայի ներկայացուցիչներու մնայուն քոմիթէին, բեմ կը բարձրանայ. քանի մը խօսք ունի միայն արտասանելու ուսս կնոջ ներկայ տագնապին մէջ բռնելիք ընթացքին վրայ, այն քաջալերութեան վրայ՝ որ իւրաքանչիւրը կընդունի իր օճախին մէջ ամրմէն, կնոջմէն, քրոջմէն. այն ճշմարիտ հերոսութեան վրայ, որ կը հրահրէ էն բոլորի սրտին,—եւ ահա մեծաշուինդ ծափեր կողջունեն հոստորը։ «Յեղափոխութիւնը! Մեր կիներն են որ պիտի կատարեն այդ։ Շահագրգռեցէք զիրենք ատով եւ մենք անպարտելի պիտի դառնանք»։

Եւ ընդհանուր քուէարկութիւնը առաջ գնաց մինչեւ կնոջ ու քուէարկուեցաւ միաձայնութեամբ։

Կասբօն Լրոու

Թարգ. «Մաթէն»

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՍՕՖԻԱ, 24 Յուլիս 1905

Պատահմամբ անցեալ օր Սօֆիայի մէկ հայ սրճարանին մէջ գտնուած ժամանակս հանդիպեցայ Պուլկարիոյ մէջ հրատարակուող «Իրաւունք» թերթին, ու վայրկեան մը ուշադրութիւնս անոր դարձնելով առի կարդալու՝ անոր մէջէն սկսայ փնտռել կարեւոր յօդուածներ որ կարդամ, զննելով անոնց վերնագրէն. բայց երբ յանկարծ նշմարեցի երկրորդ երեսին վրայ տպուած «Թատերական Քրոնիկ ՕԹԷԼԼՕ» վերնագիրը և Սոֆիացի ստորագրութեամբ յօդուածը. ու սկսայ կարդալ՝ որ կը քննադատուէր տեղս գտնուող «Վարիէթէ» Հայ. գերս. խումբի մօտերս խաղացած ՕԹԷԼԼՕ Շէյքսբիրեան տրամի դերակատարները, որուն բարեբաղդութիւն ունեցած էի ներկայ ըլլալու։ Այսուամենայնիւ երբ որ Սօֆիացի քննադատին անիրաւորէն գրածները բոլորը կարդացի. առանց վայրկեան մը կորսնցնելու, գրիչս ձեռք առի և կարելի եղածին չափ միտք դրի պատասխանել նախանձոտութենէ մը յառաջ եկած այս քննադատութեան մասին։

Արդ, պարոնը գրեթէ ճշմարիտ քննադատութեան ձեւ տալ ուզած է իր գրածին բայց եւ այնպէս ինչպէս յայտնի եղաւ միշտ հարուածելու մտքով եւ խորհրդածութիւններով գրիչ ձեռք առած եւ խօսքը ուղղած է ՕԹԷԼԼՕ ներկայացնող դերասան պ. Շաւարշի, որ կը քննադատէր իր գրիչով ծաղրաբանական ու վարի աստիճան դերասան մը ներկայացնելով զայն իր յօդուածին մէջ ժողովրդին առջեւ, ըսելով թէ նա անկարող է երբ ՕԹԷԼԼՕ դերը կատարել ամեն կերպով։ Իրաւ շատ ցաւ զգացի երբ կարդացի սա անգէտօրէն գրածները եւ մինչեւ անգամ զզուանքս թքնել ուզեցի այդ քննադատին յօդուածին վրայ որը կարծեմ բառին բովանդակ նշանակութեամբ անմիտին մէկը ըլլալու է։

Նաեւ պարոնը առանց ամաչելու կրցած է համարձակիլ երկու խօսքով

կայի ձեռքը պատասխանելով.

—Շատ լաւ ֆք անում. միեւնոյն է չէի պատասխանի։

———

Մինչեւ այս հրատարակութիւնը իմ այս վէպս տպագրվում էր, այժմ դադրած, մի շատ տարածված թերթում. առաջին տպագրութեան այդ չրջանում։ վէպի գլխաւոր տիպը շատ ընթերցողների, մանաւանդ գաւառական. ստիպել էր դիմելու ինձ նամակներով. Այդ նամակագիրներից մեծ մասը հետեւեալ հարցերով էր հետաքրքրվում.

—Վիկտորիան, իրական կենդանի տիպ է՞. Պրովօսլա կալուածը գոյութիւն ունի՞։

Եւ այր մարդկանց, ըստ երեւոյթին շատ ցանկալի էր որ Վիկտորիան ապրէր աշխարհում և Պրովօսլան գոյութիւն ունենար.

Տիկիններից մի քանիսը բարկանում էին իմ մեղաւոր հերոսուհուս դէմ, քնքուշ սեռին յատուկ վարժութեամբ. բայց բարկացողները աւելի քիչ էին. սրանցից մին գրում էր որ իրեն իդէալն է եղել իր կեանքը Վիկտորիայի պէս պարզեցնել, բայց հարուածելու տրամադիր կովին Աստուած եղջիւրներ չէ տուել.

Կարող եմ մխիթարել, թէ Վիկտորիան կենդանի է և թէ Պրովօսլան իր տեղում. այրված չէ. եւ ես այնտեղ գտնվել եմ. բայց ի հարկէ իմ պատկերացումս լուսանկարչական չէ. կեանքից վերցրած է գլխաւոր տիպի ընդհանուր գծերը եւ տեղաւորված կրկին իրական գոյութիւն ունեցող պայմաններում.

Ես պատմում եմ այն ինչ որ ինձ պատմել է ընթացիկ կեանքը. իմ միակ հնարագիտութիւնս փաստերի եւ պայմանների չարադրումն է որ իրօք չրջապատում են գլխաւոր տիպին որ եւ շատ նման է շատ շատերին. այնուամենայնիւ սա լուսանկար չէ. Շատ կարելի է որ ընթերցողը եթէ պատահի իրական Վիկտորիայն իսկոյն, իմ նկարագրածի հիման վրա, չը ճանաչէ նրան եւ շտապով յայտարարէ—որչափ սուտ է իսօսել Ա. Բ. Ա միայն ժամանակը եւ լուրջ դիտումը կը փաստեն որ սուտ չէ.

Վիկտորիայի իրականը ինքը հետեւեալն է գրում ինձ.

—Դուք ինձ աւելի խելացի եւ կրթված էք մէջտեղ բերել, ձեր գրքում շատ խնդիրների մասին խօսում եմ ես, մինչդեռ իրականութեան մէջ երբէք էլ չեմ մտածել.

Այդ ճիշդ է. Վիկտորիան ինձ չէր հետաքրքրում իբրեւ կանացի առանձին տիպ՝ որ ճարպիկութիւնն էր ունեցել իր մասնաւոր կեանքը հետաքրքիր ու անսովոր կերպով սարքել, ունենալ մի քանի սիրային արկածներ. Նա ինձ նշանակելի երեւաց այն պատճառով, որ նրանում ես գտայ այն շատ սովորական պայծառ վճռողական արտայայտութիւնը հանրային անտարբերութեան որով հետզհետէ աւելի յաճախ հիւանդ են մեր դարի կանացի ուժերը. Ահա ինչի Վիկտորիան իմ վէպում շատ բան է ասում. որի մասին բոլորովին չէ էլ մտածել. բայց ինչ որ ասել են եւ արել նրա շատ քոյրերը իրենց կեանքի անյաջողութեան առթիւ.

—Կերթայի, կը գոցվէի Պրովօսլայում, գրում է նրանցից մէկը, բայց ես Պրովօսլա չունեմ.

Ես մաքուր Բէլէտրիստ չեմ. ես օրագրող եմ. իմ գործս թերթն է, հրապարակախօսութիւնը. ահա թէ ինչի ես խոնարհութեամբ ընդունում եմ այն յանդիմանութիւնը, թէ Վիկտորիայի շատ խօսքերը ճշմարտանման չեն երեւում եւ ոչ թէ իմ հերոսուհու մտքերի զարգացումն են ներկայանում, այլ սեփական. ուրեմն չեմ յաջողել. ներողութիւն սարսափելի բարբարիզմիս համար, որով ուզեցել եմ հրապարակագրի ճառերս բելետրիստականի վերածել.

Իմ խորին համոզումով կենսական խնդիրների մէջ չը կայ մի խնդիր, որ կնոջական խնդրի նման հանրային կեղծաւորութիւնը յառաջդիմութեան քթից բռնած մեծ հմտութեամբ եւ յամառութեամբ քարշ տար. Մեր նախայրերը կոպիտ եւ բացսիրտ էին. «կնոջը» տանն էին պահում. հայրերը «կնոջը» տնից դուրս հանեցին, եւ բացատրեցին որ նա կին մարդէ այր մարդուն հաւասար իրաւունքներով.

(Շարունակելի)

ըսել թէ «պ. Պապազեան պ. Շաւարշէն տասնեակ անգամ աւելի լաւ կը կատարէ ՕԹԷԼԼՕ-ն»: Թերեւս սոյն անհասկանալիօրէն գրածին կարելիութեան ունենայի հաւատալու եթէ բաբերաղդաբար տեսած չըլլայի դերասան պ. Պապազեանի ՕԹԷԼԼՕն խաղալը որը իրաւ թէեւ իր կազմուածքի տեսակէտով լաւ ՕԹԷԼԼՕ մը կը պատկերացնէ, սակայն եւ այնպէս միայն ատով չի լուծուիր խնդիրը խաղացած դերին քանի որ չունի (անկեղծօրէն եւ արժանիքը ճշմարիտ գտնելով կը խօսիմ) դերասան ողբերգակ պ. Շաւարշի ունեցած ի բնէ յատկութիւնները ձիրքի, դէմքի, տեսքի եւ նաեւ լեզուի քաջ արտասանութեան հետ ձայնի գոռում գոռում գոչումներու անուշութիւնը, վերջապէս չեմ կրնար ըսել թէ պ. Շաւարշ այդ գիշերուան ՕԹԷԼԼՕի դերին մէջ կատարելապէս կատարեց իր դերը այլ ունի մի պակասութիւն որ կարծեմ ինքն ալ քաջ գիտէ կամ կ'զգայ այդ մասը որ է կազմուածքի թերի ըլլալը. բայց եւ այնպէս պ. Շաւարշ այդ գիշեր իր աննկարագրելի յատկութիւններուն շնորհիւ իր պակասը գոցեց գոհ ձգելով թատերասէր հասարակութիւնը: Մէկ խօսքով պիտի կրնամ համարձակիլ ըսել թէ մեր պուլկարահայութեանս մէջ չկայ անոր պէս լաւ յատկութիւններով օժտուած դերասան մը:

Խորհուրդ պիտի տայի թէ՛ պ. Սոֆիացիին և թէ՛ կարգ մը ինքզինքնին բանի տեղ դնող երիտասարդներու որոնք քանի մը բառ իրար քով հաւլիւ հաւ դնել սորված են գիտեն չիտեն չելլեն ցուցագործեն դէս ու դէն գտնուած արուեստագէտներու մասին քննադատականներ գրել ձգտին եւ պարապ տեղը խնդացնել տան հայ թատերասէր հասարակութիւնը իրենց վրայ, ինչպէս որ օրինակ մը եղաւ պ. Սոֆիացիին քննադատութիւնը որ իր խենդ ու խելար գրուածքովը ցոյց տուաւ իր տկարութիւնը եւ քահքահներու ենթարկուեցաւ թատերասէրներէն:

Ասով մէկտեղ թէեւ կուզէի պ. Սոֆիացիին գեռ չատ մը մանրամասնօրէն անիրաւօրէն գրածներուն պատասխանել բայց եւ այնպէս վայրկեան մը մտածելով աւելի նախամեծար համարեցի այսչափով գոհ ըլլալ քան թէ այս տեսակ պարապ խնդրի մը համար աւելորդաբանութիւններով „Շարժումի պէս ազգօգուտ թերթի մը յարգի սիւնակները լեցնելու զոհել:

Գալով գրութիւնս վերջացնելէս առաջ պիտի խնդրեմ արտասահմանի մէջ հրատարակուող թերթերու քանի մը պ. խմբագիրներէն որ իրենց կարգ մը բաժանորդներու քմահաճոյքին համեմատ առարկայ եղող այս տեսակ յօդուածներու ենթակայ չընեն իրենց թերթը:

ՖՌԱՆԿԻԼ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Մելհամէ, Սուլթանի մահափորձին առթիւ կազմուած յանձնախմբին նախագահը յայտնած է որ դաւադիրներուն հետքերը իրօք գտնուած են. Թուրք կառավարութիւնը անուններու օրօշ ցանկով մը դիմած է եւրոպական պետութեանց որ Պոլսոյ իրենց փօստատուները այդ հասցէներով Պուլկարիայէն եկած նամակները կառավարութեան յանձնուին:

— Թուրք կառավարութիւնը դիմեր է Զուիցերիոյ կառավարութեան պահանջելով Սուլթանի դէմ մահափորձ ընողներուն որոնք Լիւցերն ապաստաներ են:

— Պոլսէն Ֆր. Ցայթունկ թերթին կը հաղորդեն որ Թուրքիա Զուիցերիոյ կառավարութենէն պահանջած է արտաքսումը հետեւեալ անձերու որոնք Լիւցերն. օթէլ Վիկթօրիայի մէջ կապրին և մեղաւոր են Սուլթանի դէմ եղած մահափորձին մէջ:

Ատոնք են Սօֆիա և Լիա Ռիպս. Սիլվիօ Ռիչի. Սամուէլ և Ռէջինա Ֆային ու տիկին Ժօռիս. Ռէջինա Ֆայինը գնած է կառքը Վիէննայի մէջ. ատոնց բոլորին անունները և անցագրերը կեղծ են, բացի տիկին Ժօրիսէն: Այդ անձերը հայ և սլավօններ են: Թուրքիան այդ մարդոց իսկական անունները և նշանները եւ յայտնած է Զուիցերական կառավարութեան: Երլտըզի մէջ բանտարկուած տիկին Ժօրիս շատ ընդարձակ և կարեւոր տեղեկութիւններ տուած է:

— Բեռնէն Ն. Ֆր. Պրէսսէ եկած հեռագրի մը համաձայն զուիցերական կառավարութիւնը ի նկատի առած է Թուրքիոյ այդ պահանջը, բայց այդ անձերը ձերբակալելու և գանոնք յանձնելու համար կը պակսին անհրաժեշտ պաշտօնական ձեւակերպութիւնները: Ի հարկէ այդ անձերը պիտի պատասխանեն որ իրենց գործածը քաղաքական յանցանք է. ուստի Զուիցերիոյ կառավարութիւնը նախապէս պիտի զբաղի յանցանքին տեսակը որոշելու խնդիրով:

— Յուլիս 28 ին Պոլսէն կը հեռագրեն որ Բ. Դուռը դեռ պատասխան տուած չէ պետութեանց նօթային, որով կը պահանջուէր Մակեդոնիոյ Ելեւմուտքին քոնթրօլի գործադրումը: Եւ եթէ Թուրքիոյ պատասխանը բացասական ըլլայ, ինչպէս կերեւի Պոլսոյ մէջ տիրող տրամադրութենէն, պետութիւնները առանց Սուլթանի համաձայնութեան իրենց քօնթրօլէօրները պիտի ղրկեն Սէլանիք, որոնք հիւպատոսական աստիճան պիտի ունենան և արդէն նշանակուած են:

ՌՈՒՍԻԱ

„Կառավարական Թերթը" հրատարակեց ընդհանուր և տեղական կոնգրէններու օրէնքը, արտակարգ թէ, պարբերական, որոնց զբաղման նիւթը պիտի ըլլայ ներքին և արտաքին վաճառականութեան վերաբերեալ խնդիրները: Այդ համագումարումներուն պիտի մասնակցին պետութիւն, պօրսաներու, զէմստվօներու և երկրագործական ընկերութիւններու ներկայացուցիչներէն:

„Բօսթ" թերթին թղթակիցը հետեւեալը կը հաղորդէ. երեք օրէ իվեր ցարը մեծ փափաք կը յայտնէ որ հաշտութիւնը կնքուի, ցարը սրտանց կուզէ զիջողութիւններ ընել Ճապոնի, բայց կուզէ որ Ռուսիոյ իբրեւ մեծ պետութեան, պատիւը խնայուի: Այդպիսով, ինչպէս յայտարարեց և Ուիթէ, կարելի է որ երկու կռուող պետութեանց միջեւ բարեկամական յարաբերութիւններ ստեղծուին:

ԿՐԷՏԷ

Կրէտացիները կուզեն Եօրկիոս իշխանը կղզիէն արտաքսել:

ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ԱՆԳԼԻԱ

Անգլիական թագաւորը որոշած է այցելութիւն տալ Վիլհէլմ կայսեր: Գերմանական մամուլը մեծ գոհունակութեամբ դիմաւորեց այդ լուրը:

ԱՆԳԼԻԱ ԵՒ ՖՐԱՆՍԱ

Ֆրանսական նաւատորմիղը կը գտնուի Բօրթսմութ. Թագաւոր Էտուարտ իր զբօսանաւով դիտելու եկած է ֆրանսական և անգլիական նաւաբաժինները, մեծ ոգեւորութիւն առաջացնելով երկու նաւատորմիղներուն պաշտօնեաներուն մէջ:

ՌՈՒՍՕ—ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Հռոմէն կը հեռագրեն հետեւեալը. ճապոնական դեսպանատան զինուորական կցորդը մեծ յոյսեր ունի հաշտութեան բանակցութիւններուն վրայ. բայց եթէ հակառակ ամեն սպասումներու լիազօրները համաձայնութեան չը յանգին ճապոնեան նաւատորմիղը կը ղրկէ Պալթիկեան ծովը:

— Սախալինի մէջ ճապոնցոց գերած ռուսներուն թիւը 4200 հոգիի կը հասնի:

ԹԱՏՐՈՆ „ՊՕՐԻՍ"

Արտաքոյ կարգի չքեղ ներկայացումն Վ է ս է լ օ Հայ դերասխմբին, առաջնորդութեամբ պ. Ա. Պէնլեանի, 1905 Օգոստ. 1 եբեքշաբթի գիշեր ժամը ճիշդ 9 ու կէսին անզուգական երեկոյթ ի նպաստ պ. Ա. Պէնլեանի

ՕԹԷԼԼՕ

Ողբերգութիւն 5 արարուած

Սոյն Օթէլլօն առաջին անգամ ըլլալով պիտի ներկայացուի, որուն նիւթը բոլորովին տարբեր է Շէյքսբիրի Օթէլլօէն հեղինակութիւնն է Ֆրէտրիք Սուլիէ:

Կարժէ տեսնել և քաջալերել նպաստաւորեալը որ ամեն ջանք և զոհողութիւն խնայած չէ խաղին նոր փայլ մը տալու համար:

ԱԶԴ

Տեղւոյս երկսեռ դպրոցի մէջ պաշտօնավարելու համար. կարող վարժուհիի մը պէտքը կայ, գոհացուցիչ ամսականով. մանրամասնութեան համար դիմել տեղւոյն Հոգաբարձութեան ատենապետին:

Ի դիմաց Հոգաբարձութեան

Վ. Ատենադպրի | Ատենապետ
Վարդան | Աղէքսանդր Գ.
Արապեան | Բիգիրեան

(Կնիք)

23 Յուլիս 1905
Սլիվէն

ԱԶԴ

Ռումանիոյ Ֆօքշան քաղաքի Հայոց եկեղեցւոյն համար պէտք է ունենալ բարեկիրթ եւ իր նուիրական կոչումին լաւ ճանաչող քահանայ մը: Նոյնպէս միեւնոյն բարեմասնութիւնոք օժտեալ երաժիշտ մը՝ քաղցրանուագ ձայնիւ:

Փափաքողներն դիմեն գրաւոր եւ որոշ տեղեկութեամբ ու միանգամայն ազգային պաշտօնական վկայութեամբ առ Էկիբզ Արմէնիէն ա Ֆօքշան Ռումանիա:

ՀԱՑԿԱԿԱՆ ՆՈՐ ԴՊՐՈՑ ԱՄԻՐԽԱՆԵԱՆՑԻ

Իվանա

Գլխաւորապէս Ֆրանսերէն լեզուով

Պարտաւորիչ են նաեւ Հայերէնը եւ Պուլկարերէնը, իսկ Գերմաներէնը, Անգլիերէնը եւ պիանօ փափաքողներուն մասնաւոր պայմանով: Դպրոցը կ'սկսի յառաջիկայ սեպտեմբերի մէկին: Ամիսը 8 ֆրանք մէկ աշակերտէն: Կան արդէն գիշերօթիկներ, եւ մի քանիք ալ կ'ընդունուին: Այս մասին դիմել երեքշաբթի, հինգշաբթի եւ շաբաթ օրը երեկոյեան ժամը 5–8, եւ կամ նամակով

Ա. ԱՄԻՐԽԱՆԵԱՆՑԻՆ:

Կ Վ
Ը Ա Ի
Ծ Ի
Ա Ո
Ռ

Վառնա, կեդրոն փողոցի մը մէջ մէկ ու կէս յարկով քարաշէն հաստատ տուն մը շինուած 95 քառակուսի մէթր տարածութեան վրայ, 245 ք. մէթր պարապ հողով: Ունի 5 սենեակ, մէկ խոհանոց, լուացարան, հոր եւ ամեն ինչ որ անհրաժեշտ են ընտանիքի մը հանգստութեանը համար:

Փափագողք կրնան դիմել «Շարժում»ի խմբագրութեանը:

Печатница на П. Глушковъ и С-ие, Варна